ՕՀՄ-49/16.02.2024

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Երևան քաղաքի առաջին ատյանի
ընդհանուր իրավասության քրեական դատարան,
նախագահող դատավոր՝ Մ.Մարտիրոսյան

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարան,
նախագահող դատավոր՝ Կ.Հովհաննիսյան

27 հունիսի 2025 թվական ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով [redacted] վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2024 թվականի օգոստոսի 26-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Պողոսյանի հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը,

# ՊԱՐԶԵՑ

**<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>**

1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2024 թվականի փետրվարի 16-ի որոշմամբ բավարարվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանադրական կարգի պահպանության և ահաբեկչության դեմ պայքարի գլխավոր վարչության պետի միջնորդությունն ու թույլատրվել՝ երկու ամիս ժամկետով [redacted] նկատմամբ իրականացնել «թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառում:

2. [redacted] ներկայացուցչի հատուկ վերանայման վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2024 թվականի օգոստոսի 26-ին որոշում է կայացրել բողոքը բավարարելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 16-ի որոշումը բեկանելու և վերոնշյալ միջնորդությունը մերժելու մասին:

3. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Պողոսյանը բերել է հատուկ վերանայման վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2024 թվականի նոյեմբերի 29-ի որոշմամբ ընդունվել է վարույթ ու սահմանվել է դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

**<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.</u>**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

4. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ ստորադաս դատարանը թույլ է տվել դատական սխալ, որն ազդել է վարույթի ելքի վրա, և միաժամանակ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման անհրաժեշտություն:

Այսպես, ըստ բողոքի հեղինակի՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքին միջամտող միջոցառումների նկատմամբ դատական վերահսկողությունը պետք է հիմնվի այն տրամաբանության վրա, որ քրեական

վարույթի շրջանակներից դուրս օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու թույլտվություն ստանալու միջնորդությունը և նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում համաբնույթ միջնորդությունը լուծելիս, այն չափանիշները, որոնց գնահատմամբ կարելի է պարզել անձի սահմանադրական իրավունքի սահմանափակման անհրաժեշտությունն ու համաչափությունը, նույն բովանդակությունը չեն կարող ունենալ: Մինչդեռ, վիճարկվող դատական ակտով միջամտության անհրաժեշտությունը և համաչափությունը գնահատելիս նմանատիպ տարբերակում չի դրվել:

Վերը նշվածի լույսի ներքո, ստորադաս դատարանի պատճառաբանությունների համատեքստում անդրադառնալով սույն վարույթի փաստական հանգամանքներին՝ բողոք բերած անձը փաստել է, որ տվյալ դեպքում ձեռնարկվել են մասնավոր և ընտանեկան կյանքի ոլորտ նվազ միջամտող միջոցառումներ, որոնց արդյունքում թեև հաստատվել է [redacted] կողմից ենթադրյալ հանցանքի՝ մի խումբ անձանց հետ թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեջ ներգրավված լինելու և նրա կողմից շահագործվող բջջային հեռախոսահամարի մասին օպերատիվ տվյալը, սակայն օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի վրա դրված խնդիրների իրականացման համար բավարար արդյունք չեն տվել, ինչն էլ օպերատիվ-հետախուզական գործունեության սկզբնական փուլում առաջացրել է միջնորդվող օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու անհրաժեշտությունը: Վերը նշվածի հաշվառմամբ բողոքաբերը փաստարկել է, որ ներկայացված միջնորդությամբ հիմնավորվում է [redacted] սահմանադրական իրավունքի սահմանափակման անհրաժեշտությունն ու համաչափությունը: Այս համատեքստում նշվել է, որ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքին միջամտության ավելի բարձր աստիճան ունեցող օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու թույլտվություն ստանալու միջնորդությամբ դատարան դիմելուն նախորդող ընթացակարգը ստացված օպերատիվ տեղեկատվության ստուգման գործընթաց է, ինչը, ըստ բողոքի հեղինակի՝ ևս նշանակություն ունի համապատասխան միջնորդությունը լուծելիս:

Արդյունքում, բողոք բերած անձը գտել է, որ Առաջին ատյանի դատարանը, թույլատրելով երկու ամիս ժամկետով [redacted] նկատմամբ իրականացնել

միջնորդվող օպերատիվ-հետախուզական միջոցառումը, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ:

5. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2024 թվականի օգոստոսի 26-ի որոշումը:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>**

6. «Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին որոշման համաձայն՝ *«(...) [Ս]տացվել են օպերատիվ տեղեկություններ այն մասին, որ* [redacted] *(...) մի խումբ դեռևս չպարզված անձանց հետ միասին, զբաղվում է խոշոր խմբաքանակի թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառությամբ:*

*(...) [Ս]տացված օպերատիվ տեղեկությունները փաստում են, որ* [redacted] *գործողությունում հնարավոր է առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված առերևույթ հանցագործության հատկանիշներ:*

*(...) [Կ]ատարվել են «օպերատիվ հարցում», «օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում» և «արտաքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, սակայն ձեռնարկված միջոցառումների արդյունքում հնարավոր չի եղել ձեռք բերել ենթադրյալ հանցագործության բացահայտման համար անհրաժեշտ տեղեկատվությունը:*

*Միաժամանակ, ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել է, որ* [redacted] *օգտագործում է* [redacted] *բջջային հեռախոսահամարը: Նա իր՝ վերոգրյալ հնարավոր հանցավոր գործունեությանը վերաբերելի խոսակցությունները վարում է նշված հեռախոսահամարով:*

*(...)*

*Նկատի ունենալով, որ (...) ներկայացված նյութերը պարունակում են տեղեկություններ* [redacted] *կողմից առերևույթ ծանր՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով*

*նախատեսված հանցանքի կատարման և այդ հանցավոր գործունեությունը վերջինիս կողմից շարունակելու հավանականության մասին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ձեռնարկված միջոցառումների արդյունքում հնարավոր չի եղել ձեռք բերել ենթադրյալ հանցագործության բացահայտման և հանցավոր գործունեության շարունակումը կանխելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը, իսկ այլ եղանակով ողջամտորեն հնարավոր չէ այդ տեղեկատվության ձեռքբերումը՝ ենթադրյալ հանցանք կատարած անձին հանցանքի կատարման պահին կամ դրանից անմիջապես հետո բացահայտելու, ինչպես նաև նրա կողմից հանցավոր գործունեության շարունակումը հայտնաբերելու և կանխելու նպատակով անհրաժեշտ է վերջինիս նկատմամբ (...) իրականացնել «թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը (...)»*[1]:

6.1. Հիշյալ միջնորդությանը կցված՝ ««օպերատիվ հարցում», «օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում» և «արտաքին դիտում» համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների մասին» վերտառությամբ արձանագրության համաձայն՝ *«(...) Ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել է, որ* [redacted] *օգտագործում է* [redacted] *բջջային հեռախոսահամարը: Նա իր՝ (...) հնարավոր հանցավոր գործունեությանը վերաբերելի խոսակցությունները վարում է նշված հեռախոսահամարով:*

*Ձեռնարկված միջոցառումների արդյունքում հնարավոր չի եղել ձեռք բերել ենթադրյալ հանցագործության բացահայտման համար անհրաժեշտ տեղեկատվությունը»*[2]:

7. «Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը կարգադրող Առաջին ատյանի դատարանի դատական ակտի համաձայն՝ *«(...) [Ն]երկայացված նյութերը պարունակում են տեղեկություններ* [redacted] *կողմից առերևույթ ծանր՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հանցանքի կատարման և այդ հանցավոր գործունեությունը*

---

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթ 2-4:
[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթ 9:

*վերջինիս կողմից շարունակելու հավանականության մասին: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում հնարավոր չի եղել ձեռք բերել ենթադրյալ հանցագործության բացահայտման և նշված անձի հանցավոր գործունեության շարունակումը կանխելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը, իսկ այլ եղանակով ողջամտորեն հնարավոր չէ այդ տեղեկատվության ձեռքբերումը:*

*[Առաջին ատյանի դ]ատարանը գտնում է, որ ենթադրյալ հանցանք կատարող անձին հանցանքի կատարման պահին կամ դրանից անմիջապես հետո բացահայտելու, նրա ենթադրյալ հանցավոր գործունեության շարունակումը հայտնաբերելու և կանխելու նպատակով* [redacted] *նկատմամբ երկու ամիս ժամկետով «Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու անհրաժեշտության մասին ներկայացվել են բավարար հիմնավորումներ, նշված օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացները թույլատրելու անհրաժեշտությունը բխում է ենթադրյալ ծանր հանցագործության կատարումը բացահայտելու, ենթադրյալ հանցավոր գործունեության հավանական շարունակումը կանխելու անհրաժեշտությունից, քանի որ տվյալ դեպքում հանրային շահը գերակայում է* [redacted] *մասնավոր շահի՝ այդ թվում անձնական կյանքի գաղտնիության նկատմամբ»*[3]*:*

8. Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով նաև *Ռուբեն Խլղաթյանի* գործով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը, մերժել է օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու թույլտվություն ստանալու միջնորդությունը՝ արձանագրելով հետևյալը. *«(...) [Բ]ացառապես օպերատիվ տեղեկատվության առկայությունը չի կարող համարվել բավարար հիմք օպերատիվ-հետախուզական միջոցառման կատարումը թույլատրելու համար: Հետաքննության մարմնի կողմից նշված օպերատիվ տեղեկատվության ճշմարտացիությունը հավաստող այլ նյութեր չեն ներկայացվել, որի պայմաններում Առաջին ատյանի դատարանն օբյեկտիվորեն զրկված է եղել նման տեղեկատվությունը գնահատելու հնարավորությունից, ինչից հետևում է, որ միայն*

---

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 11-14:

*օպերատիվ աղբյուրից ստացված տեղեկատվության մասին տեղեկանքի քաղվածքը կամ դրա վերաբերյալ կազմված արձանագրությունն ինքնին բավարար չեն հաղթահարված համարելու այն նվազագույն շեմը, որն անհրաժեշտ է անձի սահմանադրական և կոնվենցիոնալ իրավունքի սահմանափակման և դրա նկատմամբ միջամտություն իրականացնելու համար:*

*Ինչ վերաբերում է միջնորդությամբ ներկայացված այն փաստարկին, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին լինելուն, ապա Վերաքննիչ դատարանը փաստում է, որ այն հիմնավոր չէ, և գտնում է, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումը ենթադրում է առավել ինտենսիվ ներգործություն անձի իրավունքների նկատմամբ, հետևաբար այն կարող է կատարվել այն դեպքում, երբ անձի իրավունքների առավել նվազ սահմանափակում ենթադրող միջոցառումները չեն կարող ապահովել իրավասու մարմինների կողմից՝ իր վրա դրված խնդիրների իրականացումը:*

*Ինչ վերաբերում է միջնորդությամբ ներկայացված մյուս փաստարկին, այն է՝ կատարվել են «օպերատիվ հարցում», «օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում» և «արտաքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումները, սակայն ձեռնարկված միջոցառումների արդյունքում հնարավոր չի եղել ձեռք բերել ենթադրյալ հանցագործության բացահայտման համար անհրաժեշտ տեղեկատվությունը, ապա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ բացակայում են դրանք հիմնավորող փաստական տվյալներ, ուստի բացակայում է նաև այն գնահատելու հնարավորությունը, որպիսի պայմաններում բավարար չէ նման անհնարինության մասին փաստարկված հետևության հանգելու համար: Արդյունքում, Վերաքննիչ դատարանը փաստում է, որ միջնորդությամբ և կից նյութերով հետաքննության մարմինը չի ներկայացրել այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից օրենքով իր վրա դրված*

*խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերման անհնարինության վերաբերյալ բավարար տվյալներ»*[4]:

**<u>Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

9. Սույն վարույթով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ է արդյոք [redacted] նկատմամբ «թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու թույլտվություն ստանալու միջնորդությունը մերժելու վերաբերյալ ստորադաս դատարանի հետևությունը:

10. Վճռաբեկ դատարանը, բացահայտելով քրեական վարույթի շրջանակներից դուրս օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման անհրաժեշտությունը և համաչափությունը հիմնավորելու պահանջի բովանդակությունը, *Վազգեն Ոսկանյանի* գործով որոշման շրջանակներում արձանագրել է, որ օպերատիվ աղբյուրից ստացված՝ որոշակի իրադարձությունների կամ անձանց վերաբերելի տեղեկությունը քրեական վարույթի շրջանակներից դուրս դառնում է օպերատիվ-հետախուզական մարմինների ուսումնասիրության առարկա և այդ տեղեկատվության հավաստիության ստուգման անհրաժեշտությունն է առաջացնում որոշակի օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու՝ օպերատիվ հետախուզական մարմնի միտումը:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ նախաձեռնված քրեական վարույթի պայմաններում քննիչը ստանում է ենթադրյալ հանցանքին վերաբերող հանգամանքները պարզելու բավականին լայն գործիքակազմ, որը դրսևորվում է տարաբնույթ վարութային գործողությունների կատարմամբ և դատավարական ակտերի ընդունմամբ, որոնց արդյունավետության երաշխիքներն այն դատավարական կարգավորումներն ու ընթացակարգերն են, որոնք մի դեպքում՝ սահմանում են վարութային պարտականություններ, իսկ մյուս դեպքում՝ կոչված են ապահովելու այդ պարտականությունների կատարումը: Այսինքն, քրեադատավարական ընթացակարգն էապես բարձրացնում է նախաքննական

---

[4] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, թերթեր 17-24:

մարմնի տեղեկացվածության աստիճանը, նախատեսում վերապահված խնդիրներն ավելի արդյունավետ իրականացնելու հնարավորություն, որպիսին, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինը չունի, և ըստ էության չի էլ կարող ունենալ, ինչով էլ պայմանավորված, ի տարբերություն գաղտնի քննչական գործողությունների, օպերատիվ-հետախուզական գործունեությունն իրականացվում է սակավ տեղեկատվության առկայության պայմաններում: Ողջ վերոգրյալը բավարար է արձանագրելու, որ թեև երկու դեպքում էլ դատական վերահսկողությունը միտված է միևնույն նպատակին՝ անձի հիմնարար իրավունքի կամայական սահմանափակումը կանխելուն, սակայն, քրեական վարույթի շրջանակներից դուրս օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու թույլտվություն ստանալու միջնորդությունը լուծելիս, այն չափանիշները, որոնց գնահատմամբ կարելի է պարզել անձի սահմանադրական իրավունքի սահմանափակման անհրաժեշտությունն ու համաչափությունը, նույն բովանդակությունը չեն կարող ունենալ. տվյալ դեպքում միջնորդությունը հիմնավորող փաստական հանգամանքները որակական հատկանիշների առումով կարող են նվազ լինել: Նշվածը վկայում է նաև այն մասին, որ քրեական վարույթի շրջանակներից դուրս օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվություն ստանալու միջնորդությունը լուծելիս օպերատիվ տեղեկությունների օգտագործումը կարող է անխուսափելի լինել, որոնց բավարարության աստիճանը պետք է յուրաքանչյուր անգամ դատարանը գնահատի:

Ուստի, դատական վերահսկողության տիրույթում գտնվող օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման թույլտվություն ստանալու միջնորդության հիմնավորվածությունը հաստատող փաստակազմում առկա օպերատիվ տեղեկատվության հավաստիությունը հաստատող այլ փաստական տվյալներ ներկայացնելու պահանջը համահունչ չէ օպերատիվ-հետախուզական գործունեության բնույթին ու նպատակային նշանակությանը, քանզի հենց այդ տեղեկատվության ստուգման համար է հայցվում անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքին միջամտությունը՝ պայմանով, որ այլ եղանակով անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է[5]:

---

[5] Տե՛ս, Վճռաբեկ դատարանի՝ *Վազգեն Ոսկանյանի* գործով 2024 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՕՀՄ-56/12.10.2023 որոշումը:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է կրկնել, որ մասնավոր և ընտանեկան կյանքի ոլորտ միջամտության ավելի բարձր աստիճան ունեցող օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու միջնորդության մեջ իրավասու մարմինը պետք է հիմնավորի, թե ո՞րն է միջնորդվող օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման նպատակը, ո՞ր փաստական տվյալների պայմաններում է անհրաժեշտ դարձել այդ միջոցառման իրականացումն ու հնարավոր ի՞նչ հանգամանքների պարզման ակնկալիք է հետապնդում իրավասու մարմինը: Միայն լեգիտիմ նպատակի առկայության պարագայում է, որ դատարանը կարող է պատշաճ գնահատման ենթարկել խնդրո առարկա միջամտության համաչափությունն այդ նպատակին[6]:

11. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- օպերատիվ գործունեություն իրականացնող մարմնում օպերատիվ տեղեկություն է ստացվել, որ [redacted], մի խումբ անձանց հետ, ենթադրաբար ներգրավված է թմրամիջոցների խոշոր խմբաքանակի ապօրինի շրջանառության մեջ[7],

- ենթադրյալ այդ հանցավոր արարքի բացահայտման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերման նպատակով իրականացվել են «օպերատիվ հարցում», «օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում» ու «արտաքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, որոնց արդյունքում կազմվել է համալիր արձանագրություն, ըստ որի՝ օպերատիվ գործունեություն իրականացնող մարմնի վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվություն հնարավոր չի եղել ձեռք բերել: Միաժամանակ, պարզվել է, որ ենթադրյալ հանցավոր հիշյալ գործունեությանն առնչվող խոսակցությունները [redacted] վարում է բջջային հեռախոսակապի միջոցով[8],

- ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանադրական կարգի պահպանության և ահաբեկչության դեմ պայքարի գլխավոր վարչության պետը, հաշվի առնելով [redacted] կողմից ենթադրաբար ծանր հանցագործության

---

[6] Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Կարեն Ալավերդյանի* գործով 2021 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ ԵԴ-11 որոշումը:
[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը:

կատարման ու հանցավոր այդ գործունեությունը շարունակելու հավանականության մասին տեղեկատվությունը, և միաժամանակ նկատի ունենալով, որ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումները եղել են անարդյունք, իսկ այլ եղանակով անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումը ողջամտորեն անհնարին է՝ գտել է, որ ենթադրյալ հանցավոր գործունեության շարունակումը հայտնաբերելու, կանխելու ու ենթադրաբար հանցանք կատարած անձին արարքի կատարման պահին կամ դրանից անմիջապես հետո բացահայտելու համար անհրաժեշտ է իրականացնել «թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառում, ու միջնորդությամբ դիմել է Առաջին ատյանի դատարան[9],

- Առաջին ատյանի դատարանը 2024 թվականի փետրվարի 16-ին որոշում է կայացրել միջնորդությունը բավարարելու ու երկու ամիս ժամկետով [redacted] նկատմամբ միջնորդվող օպերատիվ-հետախուզական միջոցառման կատարումը թույլատրելու մասին[10],

- նշված որոշման դեմ ներկայացված բողոքի քննության արդյունքում, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ տվյալ դեպքում հայցվող միջամտության անհրաժեշտությունը հիմնավորելու համար ներկայացված փաստական տվյալը, այն է՝ օպերատիվ աղբյուրից ստացված տեղեկատվության մասին տեղեկանքի քաղվածքը կամ դրա վերաբերյալ կազմված արձանագրությունը միջնորդության հիմնավորվածությունը հաստատող բավարար փաստակազմ չէ. այդ տեղեկատվության հավաստիությունը գնահատելու համար այլ փաստական տվյալներ չեն ներկայացվել: Նշվածից զատ, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ հաղթահարված չէ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ միջամտության համաչափության՝ այլ եղանակով օպերատիվ գործունեություն իրականացնող մարմնի վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերման ողջամիտ անհնարինության պահանջը: Այս առումով փաստարկվել է, որ բացակայում են անհնարինությունը հիմնավորող փաստական տվյալներ, ուստի, բացակայում է այն գնահատելու

---

[9] Տե՛ս սույն որոշման 1-ին և 6-րդ կետերը:
[10] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

հնարավորությունը: Արդյունքում, Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ նախաձեռնողի կողմից չի հաղթահարվել [redacted] մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը սահմանափակող օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման անհրաժեշտության ու համաչափության պահանջը[11]:

12. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-րդ կետում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը. նախ մասնավոր ու ընտանեկան կյանքի իրավունքին միջամտությունը հայցվել է քրեական վարույթի շրջանակներից դուրս, նախաձեռնողն իր տրամադրության տակ է ունեցել [redacted]՝ լատենտայնություն ունեցող ծանր հանցանքի ենթադրյալ կատարմանն առնչության հիմք տվող տեղեկատվություն, այդ թվում՝ ենթադրյալ գործունեության որոշ հանգամանքների մասին փաստական տվյալներ, երկրորդը, մասնավոր և ընտանեկան կյանքի ոլորտ նվազ միջամտող միջոցառումների արդյունքում հնարավոր չի եղել ձեռք բերել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվություն, ու երրորդը, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարը, գտնելով, որ այլ եղանակով անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է, Առաջին ատյանի դատարանին միջնորդել է թույլատրել իրականացնելու հիմնարար այս իրավունքին միջամտության ավելի բարձր աստիճան ունեցող օպերատիվ-հետախուզական միջոցառում:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում գործիքակազմի սակավությունը, և միաժամանակ այլ եղանակով ստացված օպերատիվ տեղեկության կապակցությամբ անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերման անհնարինությունն է առաջացրել [redacted] նկատմամբ միջնորդվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը: Ստացվում է, որ [redacted] հիմնարար իրավունքին միջամտության ավելի բարձր աստիճան ունեցող օպերատիվ-հետախուզական

---

[11] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

միջոցառումներ իրականացնելու թույլտվություն հայցելը հենց ձեռքբերված օպերատիվ տեղեկատվության հավաստիության ստուգման ձգտումն է, որպիսի պայմաններում այդ տեղեկատվության հավաստիությունը ստուգելու համար այլ փաստական տվյալներ ներկայացնելու Վերաքննիչ դատարանի պահանջը, սույն վարույթով, համահունչ չէ օպերատիվ-հետախուզական գործունեության բնույթին ու նպատակային նշանակությանը:

12.1. Անդրադարձ կատարելով Վերաքննիչ դատարանի դատական ակտի հիմքում դրված՝ *Ռուբեն Խլղաթյանի* գործով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշմանը, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում կրկնել, որ տվյալ գործով Վճռաբեկ դատարանի եզրահանգումը պայմանավորված է եղել կոնկրետ վարույթի շրջանակներում ներկայացված միջնորդության հիմնավորվածության տեսանկյունից տրված գնահատականով[12]:

Տվյալ դեպքում, ուսումնասիրության և գնահատման ենթարկելով վարույթում առկա նյութերը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը եկել է ճիշտ եզրահանգման առ այն, որ ներկայացված միջնորդությամբ իրավասու մարմինը հիմնավորել է, թե որն է եղել միջնորդվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման նպատակը, որ փաստական տվյալների պայմաններում է անհրաժեշտ դարձել այդ միջոցառումների իրականացումն ու հնարավոր ինչ հանգամանքների պարզման ակնկալիք է ունեցել:

Ինչ վերաբերում է ստորադաս դատարանի արձանագրմանն առ այն, որ բացակայում են այլ եղանակով օպերատիվ գործունեություն իրականացնող մարմնի վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերման ողջամիտ անհնարինության պահանջը հիմնավորող փաստական տվյալներ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ըստ ներկայացված նյութերի՝ ձեռնարկվել են մասնավոր և ընտանեկան կյանքի ոլորտ նվազ միջամտող, մասնավորապես, «օպերատիվ հարցում», «օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում» ու «արտաքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, որոնց արդյունքով կազմված արձանագրությունը ներկայացվել է դատարան:

---

[12] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Վազգեն Ոսկանյանի* գործով հիշյալ որոշման 14-րդ կետը:

Նշվածի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախաձեռնողի կողմից փաստարկվել է առաջադրված խնդիրների լուծման համար անհրաժեշտ տեղեկատվությունն այլ եղանակով ձեռք բերելու անհնարինությունը, իսկ Վերաքննիչ դատարանը չի հստակեցրել և որևէ ողջամիտ փաստարկ չի ներկայացրել առ այն, թե ի՞նչ փաստակազմ պետք է ներկայացվեր կամ ի՞նչ այլ եղանակով էր հնարավոր անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումը, ի՞նչ ավելի մեղմ միջոցի կիրառմամբ էր հնարավոր հասնել օպերատիվ գործունեություն իրականացնող մարմնի վրա դրված խնդիրների լուծմանը:

Այսպիսով, վերն արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ [redacted] նկատմամբ «թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու թույլտվություն ստանալու միջնորդությունը մերժելու վերաբերյալ ստորադաս դատարանի հետևությունը հիմնավորված չէ:

13. Ելնելով վերոգրյալից, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, սույն վարույթով դատական ակտ կայացնելիս, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 293-րդ հոդվածի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է վարույթի ելքի վրա, ինչպես նաև հանգեցրել է վարույթի հանրայնության սկզբունքի խախտման, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 362-րդ հոդվածների համաձայն, հիմք է Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար: Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանադրական կարգի պահպանության և ահաբեկչության դեմ պայքարի գլխավոր վարչության պետի միջնորդությունը բավարարելու վերաբերյալ որոշում կայացնելիս, թույլ չի տվել վարույթի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, ուստի անհրաժեշտ է Առաջին ատյանի դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 16-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, 2021 թվականի հունիսի

30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 33-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 352-րդ, 359-րդ, 361-363-րդ և 400-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

[redacted] վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2024 թվականի օգոստոսի 26-ի որոշումը բեկանել և օրինական ուժի մեջ թողնել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 16-ի որոշումը:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ